



## 72. ՈՒՍՈՒՄԸ

Քեզ պես մի ջահել տղա կնիկ ուզելու ա դնում:

Գնում ա մի ջրի դրաղի տենում ա, որ ինձ նման մի բիձա մարթ  
հրես ոտները հանում ա, որ ջուրն անց կենա:

Ասում ա.— Բիձա, էդ ի՞նչ ես անում:

Ասում ա.— Տղա ջան, ոտներս հանում եմ, որ ջուրն անց կենամ:

Թե.— Դե որ տհե ա, ոտներդ հանիլ մի, յա դու մի կարմունջ  
շինե՝ անց կենամ, յա ես մի կարմունջ շինեմ՝ անց կաց:

Թե.— Այ որթի. ես ո՞նց կարամ կարմունջ շինեմ:

Թե.— Դե արի շալակս իլ:

Բիձին շալկում ա, ջուրն անց կենում:

Գնում են հասնում Ուզունլարա դիրը, ասում ա.— Բիձա ջան, յա  
դու մի նարդիվան շինե հեշտ բցրանանք, յա՛ ես:

Ասում ա.— Այ որթի, ես ո՞նց շինեմ:

էնա էդ տղեն նաղըլն ա վեր գձում, զրից անելով հենց էդ դիրը  
հեշտ բցրանում են, որ գլխի շին ըլում, վրեններուն թվում չի:

Գնում են քարի գլուխը, Ուզունլարա դղումը մի խակ արտ ա  
ըլում, ասում ա.— Բիձա, էս արտի տերը արտը կերել ա՞, թե հլե  
նոր տի ընձիլ ու ուտիլ:

Ասում ա.— Այ որթի, արտը նոր ա հասնում, ո՞նց թե կերել ա:

Դա էլ բան չի ասում, բիձեն էլ գլխի չի ըլում, գնում են: Մութն  
ընգնելիս ա ըլում, հասնում են Ուզունլար:

Ասըմ ա.— Բիձա, ըրիգունը ղոնախատուն շունիմ, ղոնախ շե՞ս  
անիլ:

Ասըմ ա.— Ղոնախն աստուննն ա, բալա ջան, խի՞ շեմ անիլ:

էդ տղեն գնըմ ա գրա տանը ղոնախ ա ըլըմ: էդ բիձեն էլ մի  
հասած ախչիկ ա ունենըմ: Ղոնախօթախըմը տանըմ ա ղոնախի  
հմար տեղ ա գձըմ, ղրգըմ ընդի, ինքը տոլմա ա էփած ըլըմ, թեփ-  
շըմն ա ղնըմ մի շորս հատ, հոր հետ ղրգըմ ղոնախատուն: Հերը  
սոված ա ըլըմ, տանլիս մինը կուլ ա գձըմ, մնըմ ա իրեքը: Որ  
տանըմ ա տղի ըղաքին ա ղնըմ հա, ասըմ ա. — Բիձա, ձեր տարին  
տասնըմին ամիս ա՞:

Ասըմ ա.— Վա, խի՞ ա տասնըմին ամիս, մեր տարին տասներ-  
կու ամիս ա:

Ասըմ ա.— Չէ, ձեր տարին տասնըմին ամիս ա:

Հերը վեր ա կենըմ, գալիս ա ախչկանն ասըմ.— Այ որթի,  
էս տղեն կասենաս շաշ ըլի, ինձ ասըմ ա. «Ձեր տարին տասնըմին  
ամիս ա»:

Ասըմ ա.— Այ հեր, վայ թե տոլմենու մինը կուլ ես գձել:

Ասըմ ա.— Հա:

Ասըմ ա.— Ընդուր ա ասել, թե՞ ձեր տարին տասնըմին  
ամիս ա:

Ղոնախօթախիցն էն տղեն էս զրիցն իմանըմ ա:

Բիձեն ասըմ ա.— Այ որթի, մենակ էս ա՞ որ, ճամփըմն էլ  
սհե-ս՛հ շաշ ու մաշ բաներ ասեր:

Ախչիկն ասըմ ա.— Հայրիկ ջան, դրանք շաշ բաներ չեն, էն  
կարմունջով ուզեցել ա ասե, թե մինս մնիս անց կանցնենք, էր-  
կուսըս էլ թաց շի ըլինք, պառավ մարթ ես, մեխկն էկել ա, անց ա  
կացրել: էն նարդիվանով էլ ուզեցել ա ասե, թե մի զրից վեր գձենք,  
ղրըցով ըլինք, էս դբըմ բեզարենք ոչ սուս ու փուս գնալով: էն ար-  
տով էլ ուզեցել ա ասե, թե էս արտի տերը պարտքն ա արել— կե-  
րել, հմի արտը հնձել տի՞ կերածի տեղը տա՞լ, թե հլե հնձիլ տի  
ինքը նոր ուտիլ:

Բիձու բերանը բաց ա մնըմ, ասըմ ա.— Հաա՛ա:

Տղեն անգաճ ա ղնըմ, տենըմ, որ խելոք ախչիկ ա ըրեվըմ:

Կանչըմ ա բիձուն, ասըմ ա.— Բիձա, ախչիկդ ուզըմ եմ, թե  
հվանըմ ա, թող գա իրար ուզենք:

Ասըմ ա.— Դուք դիդեք բալա ջան, թե իրար հավան ե՞ք՝  
ուզեցեք:

Ախչիկը դալիս ա, ասըմ ա.— Ես էլ քեղ կուզեմ էն վախտը,

որ կարենաս ոչխարն առանց մորթիլ, առանց քերթիլ մսիցն ինձ ուտացնես:

Ասում ա.— Հա, ես էդ կանեմ, թե դուն էլ կարենաս ոչխարի բուրթն առանց գզել, առանց մանեւ ինձ հմար մի խալիչա քորձես:

Ախչիկն ասում ա.— էդ էլ իմ բոլորնին:

Տղեն գնում ա մի ղոչ առնում, բերում խոտն ըղաքին դնում, պլորնին հանում, խրովում, տանում ախչկա ըղաքին դնում, ասում ա.— էդ ղոչը, որ հրետ սաղ ա ու խոտ ա ուտում, էդ էլ դրա միսը. դե կի:

Ախչիկն ասում ա.— Տարար, դե ինձ էլ իրեք օր մլուլ տուր:

Տալիս ա: Դա գնում ա էդ ղոչին խուզում, թղքադըրնուն, առանց գզել ու մանեւ, հարիւ ա տալիս, թաղիք ա շինում, ներկերով հենց նախշեր ա անում վրին, որ դառնում ա մի սիրուն խալիչա, բերում ա տղին տալի:

Տղեն ասում ա.— Դուն էլ տարար:

Նոր դրանք իրար ուզում են, հրսանիք են ըլում, ընդուր որ հուսում են ունենում, իրար լեզու հըսկանում են:

Հմի ով հսկանա, նա էլ կտանի, տհենց ա ըշխարի բանը:

